Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԴԱՂՈՒԹԸ 1853—1856 ԹԹ. ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ռուսահայ գաղութները, մասնավորապես նրանցից առավել բազմամարդ ու նշանակալից օջախները, ապրել են հասարակական-քաղաքական միանգամայն ուրույն կյանքով։ Նրանք հայ համայնքի համեստ շրջանակներում լծորդել են երկու ժողովուրդների՝ հայ և ռուս ժողովուրդների փոխհարաբերությունները ու կապերը, աշխուժորեն արձագանքել ու մասնակցել են ռուսական հասարակական կյանքի բոլոր գլխավոր իրադարձություններին։ Մյուս կողմից, ռուսահայ զանգվածները կտրված ու անտարբեր չեն եղել իրենց ժողովրդի բախտի, նրա պատմական ճակատագրի հանդեպ։ Ուրիշ խոսքով, հայկական զանգվածները դրսևորել են ռուսական տիրապետության ներքո ապրելու ու նրա մի մասնիկը կազմելու, սակայն միաժամանակ հայկական գաղթօջախ լինելու իրենց ուրույն գոյավիճակը։

Սույն հոդվածում խոսվելու է ռուսահայ խոշորագույն գաղութներից Նոր Նախիջևանի[1] հասարակական-քաղաքական հարուստ կյանքի դրվագներից մեկի՝ անցյալ դարի կեսերի Ղրիմի պատերազմին Դոնի հայկական զանգվածի մասնակցության մասին։

Ինչպես հայտնի է, մի կողմից Թուրքիայի ու նրա հետ դաշնակցած անգլո-ֆրանսիական բանակների և մյուս կողմից՝ ռուսական զորքերի միջև պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմ դարձան Ղրիմի թերակղզին ու սևծովյան առափնյա շրջանները։

Ռուսական զորքերի համառ ու հերոսական դիմադրության շնորհիվ երկարաձգվող պատերազմում հույժ կարևորություն էր ստանում զորքին ռազմամթերք հասցնելը և պարենով ապահովելը, մանավանդ, երբ նկատի ենք առնում երկաթուղիների բացակայության պայմաններում տրանսպորտի այն ժամանակվա դժվարությունները։

---

1 Հայ ժողովրդի XVIII դ. վերջերի և XIX դ. պատմության մեջ նշանակալից դեր է կատարել Նոր Նախիջևանի գաղութը, որը հիմնվել է Եկատերինա 2-րդի 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի հիման վրա, Ղրիմի հայաբնակ վայրերից կազմակերպված գաղթի հետևանքով։

Կայսերական շնորհագրով ղրիմահայերը, հաստատվելով Դոնի ափերին, տնտեսական մի շարք առանձնաշնորհումներից զատ ստացան ազգային օրենքներով ու ավանդական սովորություններով դատ ու դատաստան վարելու, կրոնական դավանանքը պահպանելու, սեփական եկեղեցիներ կառուցելու, Էջմիածնի մայր աթոռի իրավասությանը ենթարկվելու իրավունք, և առանձին հայկական մագիստրատ ու ներքին կառավարչություն ունենալու ինքնավարություն։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Դոնի հայկական գաղութը՝ Նոր Նախիջևան քաղաքը իր հայկական հինգ գյուղերով, որպես վարչական առանձին միավոր՝ Նոր Նախիջևան կամ հայկական օկրուգ անվանումով, Տագանրոգի և Մարիուպոլի օկրուգների հետ մտնում էր փաստորեն նահանգի իրավասություններից օգտվող, Տագանրոգի քաղաքապետության (градоначальство) կազմի մեջ։

Դոնի ավազանում խաչաձևվում էին Ռուսաստանի կենտրոնական շրջաններից, Ղրիմից, Ուկրաինայից. նախակովկասից եկող ցամաքային ճանապարհները։ Դոն գետը իր վտակներով միացնում էր մերձազովյան ու սևծովյան շրջանները Ուրալի ու հեռավոր Սիբիրի և կենտրոնական նահանգները՝ Սև ծովի, հետևաբար նաև եվրոպական ու ասիական երկրների հետ։

Այսպիսով, Ազովի ու Դոնի ավազանը, գտնվելով ցամաքային ու ծովային ճանապարհների հանգույցում, սեփական արտադրանքով և ներքին ու արտաքին առևտրով խոշոր դեր էր կատարում Ռուսաստանի տնտեսության մեջ։ Նա միաժամանակ ռազմա-ստրատեգիական առաջնակարգ նշանակություն ուներ. պատերազմի ընթացքում, սևծովյան և կովկասյան բանակին պարենամթերք ու ռազմական հանդերձանք մատակարարելու խոշոր բազա էր հանդիսանում և այդ առումով էլ կռվող կողմերի համար կարևոր նշանակություն ստանում[2]։

Առաջատար դեր էր կատարում մասնավորապես Ռոստովը, ուր կենտրոնացված էին պարենամթերքի ամենախոշոր պահեստները։ Պաշարեղենից բացի այնտեղից բանակին մատակարարվում էր ռազմական հանդերձանք՝ ռումբեր, փայտյա տներ, դեղորայք և այլն։ Ռոստովի շուղունաձուլական գործարանը Սևաստոպոլի պաշտպանության համար սկսել էր արտադրել նաև հրանոթներ։

Մերձազովյան շրջանը, այդ թվում և Նոր Նախիջևանը, հեծելազորին ձիեր էր մատակարարում։ Ռոստովն ու Նախիջևանը միաժամանակ նախադուռ էին հանդիսանում Կովկասի համար։ Այլ խոսքով, Ղրիմի պատերազմի ժամանակ մերձազովյան շրջանի դերը մեծ էր թե՛ տնտեսական և թե՛ ռազմական տեսակետից։

Պատերազմ հայտարարելուց որոշ ժամանակ անց Եկատերինոսլավի նահանգը, Տագանրոգի քաղաքապետությունը հայտարարվում են ռազմական դրության մեջ[3]։

Նոր Նախիջևանի գաղութը սահմանամոտ լինելով պատերազմի դաշտին և ըմբռնելով ստեղծված նոր իրադրությունը, անմիջապես արձագանքում, սիրահոժար կամքով նկատելի օգնություն ու աջակցություն է կազմակերպում, և այդպիսով գործոն մասնակցություն ունենում պատերազմին։

Ռազմական գործողություններ ծավալելու հենց առաջին ամիսներին՝ 1854 թ. հունվարի 20-ին հայկական գյուղերը, քաղաքագլուխ Մանուկ Ալաջալովի նախագահությամբ հավաքվելով ժողովի, բանակին օգնելու պատրաստակամություն են հայտնում և դրամական նվիրատվություն կատարում։ Տեղի կառավարիչների՝ Ատամանի և ծերերի միջոցով Թոփտի գյուղը տրամադրում է 300 արծաթ ռուբլի[4], Ջալթր, Սուլթան-Սալա, Սալա և Նեսվիտա գյուղերը միասին՝ 1700 արծաթ ռուբլի[5]։ Հայ գյուղացիների հավաքին մասնակցելու հաջորդ օրը, Ալաջալովը բարձրաստիճան պետական պաշտոնյաներին հայտնում է, թե հինգ հայկական գյուղերը ռուս-թուրքական պատերազմի առիթով լցված

---

2 Տե՛ս А. Г. Коломойцев, Оборона Приазовья во время Крымской войны (1853—1856 гг.). Ростов н/Д, 1953 (рукопись), стр. 43—45.

3 Сборник известий относящихся до настоящей войны (1853—56 гг.), издаваемый Н. Путиловым, кн. 13, СПб, 1855, стр. 5.

4 Հայկական ՍՍՀ կենտրոնական պետական պատմության արխիվ (այսուհետև ՀԿՊՊԱ), ֆ. 139, գ. 269, թ. 27։

5 Նույն տեղում, թ. 29։

են կառավարությանը նվիրվածության զգացմունքով և բանակի կարիքների համար նվիրաբերել են 2000 ռուբլի գումար[6]։

1854 թ. մարտի 10-ի գրությամբ Տագանրոգի քաղաքապետը Նախիջևանի մագիստրատին հայտնում է Դոնի զորքերի հրամանատար, ատաման, գեներալ-լեյտենանտ Խոմուտովի հրամանը՝ բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնել թշնամու ներխուժման դեպքում։ Ապա շրջապատի ռազմական դրությանը ծանոթացնելու նպատակով հայտնում է, որ Դոն գետից մինչև Թամանի թերակղզին ամուր պաշտպանական գիծ է ստեղծվել՝ Դոնի կազակային չորս գնդերի ուժերով։ Հրամանում նշված են պաշտպանության առանձին տեղամասերը և դրանք պահպանող զորախմբերի անունները[7]։

Մագիստրատը հանգամանորեն քննարկում է ստացված հրամանը իրագործելու խնդիրը։ Նա պահանջում է բնակչության մարտունակ մասից՝ կազմակերպված և աշխուժ լինել, կազմ ու պատրաստ պահել ձիերը և փոխադրություն կատարելու ունակ մյուս տրանսպորտը. թշնամու հարձակման մասին որևէ լուր իմանալու դեպքում անմիջապես հայտնել և այլ միջոցառումներ։ Նշանակվում են երկու հեղինակավոր անձնավորություն՝ քաղաքում Կայալովը, իսկ գյուղերում՝ Խոջաևը մագիստրատի սույն ձեռնարկումների կատարմանը վերահսկելու համար[9]։

Պատերազմի պայմաններում զորքի պարենավորման մեջ գլխավորը հացով ապահովելն էր։ Ընդսմին, սովորական եղանակով թխված հացը մի քանի օրում փչանում էր, ուստի այն փոխարինվում էր պաքսիմատով, որի պատրաստումը, սակայն, դժվար էր ու մեծ հոգս էր պահանջում։ Հիմնական սննդով՝ հացով բանակի մատակարարմանն օգնելու ցանկությամբ Նախիջևանում քաղաքագլխի գլխավորությամբ ստեղծվում է «պաքսիմատ թխելու հատուկ հանձնաժողով։ Հանձնաժողովը պատերազմի ողջ ընթացքում եռանդուն աշխատանք է տանում և բնակչության ուշադիր վերաբերմունքի շնորհիվ մեծ հաջողության հասնում։ Բավական է ասել, որ հայ համայնքը 1854—56 թթ. իր միջոցներից պատրաստում է հսկայական քանակի՝ 10500 փութ պաքսիմատ և նվիրում բանակին։ Ամբողջ հայ գաղութի միջոցներով կատարվող նվիրաբերություններից բացի, նման հայրենասիրական վերաբերմունք էին դրսևորում նաև առանձին քաղաքացիներ, որոնք նվիրաբերեցին 2800 չետվերտ ալյուր, իսկ պետական ալյուրից թխեցին 500 փութ պաքսիմատ[10]։ Վաճառական Կ. Հայրապետյանն իր սեփական միջոցներով 500 չետ. պաքսիմատ է պատրաստում ու նվիրում բանակին[11], իսկ Ա. Խալիբյանը 10000 փութ անտրացիտ՝ սևծովյան նավատորմին[12]։

Նախիջևանցիների հայրենանվեր աշխատանքներն այնքան ակնբախ էին, որ չէին վրիպում կառավարության տեսադաշտից, և պետական բարձրադիր մարմինները հանձնաժողովի նախագահի անունով բազմիցս շնորհակալություն են հայտնում «կառավարական առաջադրանքը կատարելիս ցուցաբերած օրի-

6 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 374. թ. 2։
7 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 91, թ. 3։
8 Նույն տեղում, թ. 8։
9 Նույն տեղում, թ. 5—6։
10 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 85, գործ 91, թ. 19—20։
11 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 91, թ. 20։
12 ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարանի արխիվ. Խալիբյանի ֆոնդ։

նակելի ջանքերի համար»[13]։ Կայսրն իմանալով հայ հասարակության գովելի արարքը՝ 10000 փութ պաքսիմատ կովկասյան կորպուսի զորքերին նվիրաբերելու մասին, պաշտոնական շնորհակալություն է հայտնում[14]։

Այդ տարիներին խիստ կրճատվել էր Ազովի և Սև ծովերով կատարվող արտաքին առևտուրը։ Հայ վաճառականներն իրենց առևտրական գործունեությունը հարմարեցրել էին պատերազմական պայմաններին։ Նրանք հիմնականում զբաղվում էին բանակին ալյուր և ուրիշ պարենամթերք մատակարարելով։

Պատերազմի շրջանում առաջնահերթ խնդիր էր նաև հանդերձանքի ու պարենի տեղափոխությունը ռազմաճակատային գիծ։ Կարգավորված ճանապարհների բացակայության պայմաններում, մասնավորապես ձմռանն ու գարնան աննպաստ եղանակներին, զորքին ժամանակին պաշար հասցնելու համար լուրջ վտանգ էր ստեղծվում։

Այստեղ ևս հայ հասարակությունը հայրենանվեր վերաբերմունք է դրսևորում և տրանսպորտի իր միջոցներով նկատելի աջակցություն կազմակերպում առաջ շարժվող զորամասերին։ 1854 թ. փետրվարին Նախիջևանի և Սուլթան-Սալայի բնակիչները 18-րդ հետիոտն դիվիզիային սիրալիր ընդունելով կամովին հատկացնում են տրանսպորտի միջոցներ։ Առանց դրա, սաստիկ ձմռան օրերին զորքի անցումը դժվարություններով ու դանդաղ կընթանար։ Դիվիզիայի հրամանատարը հայ բնակիչների «այդքան գովելի զգացմունքի ու գործողությունների մասին» հայտնում է ռազմական մինիստրին[15]։ Վերջինս տեղեկացնում է, որ այդ ամենի համար Նիկոլայ 1-ինը իր կայսերական բարեհաճությունն է հայտնել[16]։

Տագանրոգ ուղարկելու համար հայ բնակիչներն իրենց միջոցներով Ռոստովից չորս ծանրաքարշ հրանոթ են տեղափոխում[17]։ Նախիջևանի բնակիչները նկատելի աջակցություն են ցույց տալիս 1854 թ. Սևաստոպոլ զորք տեղափոխող պետական պաշտոնյային[18]։

Հայ գյուղացիները երեք հարյուր սայլերով ձմռանը պաքսիմատ են տեղափոխում Տագանրոգից Մարիուպոլ, այնտեղից էլ Կերչ ու Ենիկալե[19]։ Հինգ հայկական գյուղերի ներկայացուցիչները 1855 թ. հունվարին հավաքվում են Նոր Նախիջևանում և պաքսիմատ պատրաստելու հանձնաժողովի անդամների մասնակցությամբ քննարկում Տագանրոգի ռազմական նահանգապետի գրությունը։ Վերջինս հայտնում էր, որ Ղրիմի գործող բանակին պարեն հասցնելու նպատակով հարկավոր է Ռոստովի պետական պահեստներից 150 չետվերտ պաքսիմատ Պերեկոպ տեղափոխել։ Հայ գյուղական հասարակությունը միակամ պատրաստակամություն է հայտնում «ներկա ռազմական պայմաններում աջակցել կառավարության նպատակներին ու կարիքներին»[20]։

---

13 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 91, թ. 379։
14 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 81, թ. 10։
15 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 81, թ. 4։
16 Նույն տեղում, թ. 5։
17 ՀԿՊՊԱ, ֆ. 139, 1810, թ. 379։
18 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 82։
19 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 1810, թ. 379։
20 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 68, թ. 42։

Ընդսմին հարկ է նկատել, որ բոլոր փոխադրումները և ռազմական նպատակներով իրականացվող ուրիշ աշխատանքներ հայերը կատարում էին ձրի՝ զորքին աջակցելու հայրենասիրական մղումով։

Հայ համայնքը դրվատելի վերաբերմունք է դրսևորել ռազմաճակատ մեկնող զորամասերի առաջնթացին նպաստելու, նրանց ընդունելու և ճանապարհելու խնդրում։

Նոր Նախիջևանի օկրուգի սահմաններով անցնող զորամասերին հայերը սրտաբուխ ընդունել, հաճախ օթևան են հատկացրել, պարեն մատակարարել և անգամ օժանդակել ճանապարհային դժվարությունները հաղթահարելուն։

17-րդ հետիոտն դիվիզիայի 4 և 5-րդ մարտկոցները և առաջին գումարտակը իրենց գոհունակությունն են հայտնել ժողովրդի ընդունելության, իսկ սպայական կազմը՝ նաև լավագույն սննդով հյուրասիրելու համար՝ Նախիջևանով անցնելու ժամանակ[21]։

Տագանրոգի զինվորական նահանգապետը և քաղաքացիական բաժինը շնորհակալություն են հայտնել Նախիջևանի քաղաքացիներին մոսկովյան հետիոտն գնդի չորս գումարտակ սիրով ընդունելու և 1854 թ. փետրվարի 27-ից մինչև մարտի 17-ը բնակարանով ու պարենով ապահովելու համար[22]։ Քաղաքի հասարակությունը պատրաստակամություն էր հայտնել պատերազմի ամբողջ շրջանում, առանց վարձի, տեղավորել և սննդով ապահովել երկու հետիոտն և մեկ հեծյալ մարտկոց[23]։

Հայ հասարակությունը բազմիցս կայսրի շնորհակալությանն է արժանանում զինվորական գումարտակներին, մասնավորապես սպայական կազմին արժանավայել ընդունելու և բնակարան ու պարեն հատկացնելու համար[24]։

Թշնամու կոալիցիոն ռազմական ուժերը չնախատեսված համառ դիմադրության հանդիպելով Սևաստոպոլում, վճռեցին քաղաքի հերոս պաշտպաններին ծնկի բերել և առհասարակ ռուսական բանակի դիմադրությունը վերջնականապես ընկճել նրան պարենավորումից զրկելու միջոցով։ Այդ նպատակով 1855 թ. գարնանից ձեռնարկեցին Ազովի ծովը մտնելու և մերձազովյան շրջանում գտնվող հիմնական ռազմա-պարենային բազաներն ու շտեմարանները ոչնչացնելու ռազմարշավին։ Թշնամու նավատորմի մուտքը արգելակել հնարավոր էր Կերչի նեղուցը անանցանելի դարձնելով, իսկ դրա համար անհրաժեշտ էին դրամական միջոցներ։ Պահանջվող գումարը լրացնելու ցանկությամբ սահմանամոտ շրջաններում նվիրատվությունների լայն հոսանք է սկսվում։ Դոնի հայերը այս անգամ ևս առաջին շարքերում էին, և արժանացան կայսրի ուշադրությանը[25]։ Նախիջևանը նվիրաբերում է 10000 արծաթ ռուբլի, Տագանրոգը՝ 8527 ռուբլի, Մարիուպոլը՝ 2200 ռուբլի, իսկ Ռոստովը՝ 2050 ռուբլի գումար[26]։

Չնայած բնակչության ջերմ աջակցությանը, պաշտպանությունը թույլ էր։ Ցարական ռազմական ղեկավարությունը հույսը դրել էր Կերչի նեղուցի անմատչելիության վրա, որը սխալ ու անհեռատես տակտիկա էր։ Թշնամուն հաջողվում

21 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 1810, թ. 378։
22 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 81, թ. 3։
23 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 1810, թ. 379։
24 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 81, թ. 32։
25 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 81, թ. 11։
26 Տե՛ս П. П. Филевский, История города Таганрога, Москва, 1898, стр. 161.

է մայիսի 12-ին գրավել Վերչը, մտնել Ազովի ծովը և Եյսկում, Բերդյանսկում, Տագանրոգում ու Մարիուպոլում ոչնչացնել զգալի քանակությամբ պաշար։ Սակայն նրան չի հաջողվում ավելի առաջանալ և գրավել Տագանրոգն ու մյուս առավել կարևոր բազաները։

Թշնամին ձգտում էր մասնավորապես հասնել ռազմա-տնտեսական կարևոր բազա հանդիսացող Ռոստով քաղաքը, գրավել կամ ոչնչացնել այնտեղ կենտրոնացված հացի խոշոր պաշարներն ու հրանոթի պահեստները և դրանով իսկ ծանր դրության մեջ դնել ռուսական բանակը։ Այդ անակնկալ վտանգից ապահով լինելու նպատակով տեղական իշխանություններին հարկադրում են պահեստավորված պարենն ու ռազմական հանդերձանքը տեղափոխել հայկական եկեղեցի և Արփաչինսկի խուտորը[27]։ Դրանից բացի նախատեսվում է ամրապնդել Տագանրոգի պաշտպանությունը։

Չնայած Ռուսաստանի ռազմա-տեխնիկական հետամնացությանը, պատերազմի ընթացքում ռուսական զորքը ցույց տվեց հերոսության ու խիզախության փայլուն օրինակներ։ Այդ բանն արտահայտվեց նաև ամբողջ մերձազովյան շրջանում ծավալված ռազմական գործողությունների կարևոր փուլերից մեկը հանդիսացող Տագանրոգի պաշտպանության ժամանակ։ Դոնի կազակային զորքերի և նրան ամեն տեսակ աջակցություն ցույց տվող տեղի բնակչության, ի թիվս որոնց և նախիջևանահայերի ջանքերի շնորհիվ ձախողվեցին թշնամու պլանները։ Նրան չհաջողվեց գրավել Տագանրոգը, թափանցել Դոնի մատույցները, հասնել Ռոստով ու խափանել նաև Կովկասի հետ հաղորդակցության կարճ ճանապարհը[28]։

Գետերի ու ճահճուտների վրայով զորքի անցումն ապահովելու համար հարմարանքներ ստեղծելու վրա աշխատում էին Նախիջևանի օկրուգի 2879 հայ գյուղացիներ։ Նրանք, դրանից բացի, Դոնի մատույցների պաշտպանությունը կազմակերպելու նպատակով նվիրաբերել էին 2012 ռուբլի։ Ռոստովի և Նախիջևանի բնակիչները Դոնի նավահանգիստը ամրացնելու համար հավաքել էին 7750 ռ. գումար[29]։

Ղրիմի պատերազմի ժամանակ շոշափելի էր նաև հայ գաղութի աջակցությունը վիրավորներին և առաջին հերթին Սև ծովի առափնյա ռազմական լեռները պայթեցնելու և թշնամուն հանձնելու հետևանքով անօթևան մնացած զինվորների ընտանիքներին բնակարան և սննդամթերք տրամադրելու, և կամ նրանց օգտին նվիրատվություններ կատարելու գործում։

Տակավին 1854 թ. ապրիլին փոխ-ծովակալ Լ. Սերեբրյակովը Տագանրոգի քաղաքապետ Ն. Վ. Ադլերբերգին հայտնում է ունեցվածքից ու օթևանից զրկված զինվորական հրամանատարության ու պաշտոնյաների ընտանիքները մինչև պատերազմի վերջը պահելու անհրաժեշտության մասին[30]։ Տագանրոգի քաղաքապետը Մ. Ալաջալովին հաղորդելով ստացված լուրը ավելացնում է. «Նախիջևանի բնակիչները արդեն ապացուցել են իրենց նվիրվածությունը կայսրին և հայրենիքին, այդ պատճառով էլ ես ներկա դեպքում ինձ իրավունք չեմ վերապահում կասկածել նրանց պատրաստակամության վրա»[31]։

27 Государственный архив Ростовской области, ф. 344, оп. 1, д. 605, л. 154.

28 Տե՛ս А. Коломойцев, Оборона Приазовья во время Крымской войны, стр. 214.

29 Նույն տեղում, էջ 153։

30 ՀԿՊՊԱԿ, ֆ. 139, 1824, թ. 3, 5։

31 Նույն տեղում, թ. 2, 6։

Ն. Ադելբերգը չէր սխալվում։ Շուտով Նոր Նախիջևանի քաղաքացիները «առաջնորդվելով մարդասիրական զգացմունքներով» մինչև պատերազմի վերջը տասնհինգ բնակարան են առանձնացնում զինվորականների ընտանիքներին տրամադրելու, ինչպես նաև հավաստիացում տալիս նրանց սննդամթերքը ապահովելու մասին[32]։ Հայ հասարակությունը 5000 ռ. է տրամադրում Սևաստոպոլի կայազորի վիրավոր զինվորներին խնամելու[33], և 4549 ռ.՝ Սևաստոպոլում տուժած ընտանիքների օգտին[34]։ Նախիջևանի ուսումնարանի շենքը հասարակության վճիռով դատարկվել էր ու հատկացվել պետությանը, և տեղի բնակիչների օգնությամբ վերածվել զինվորական հիվանդանոցի, իսկ ուսումնարանի համար ընդհանուր միջոցներով վարձվել ուրիշ շենք[35]։

Թշնամու նավատորմը Կերչ մտնելու հետևանքով բազմաթիվ հույն ընտանիքներ մնացել էին միանգամայն անօթևան ու անօգնական։ Նրանց այնքան սիրալիր ընդունելություն են ցույց տալիս հայերը, որ «Կերչից և Ենիկալեից դուրս եկած այդ քաղաքացիների խնդրանքով Դոնի զորքերի ատաման գեն-լեյտենանտ Խոմուտովը հայտնում է պարոն ռազմական մինիստրին՝ Ալաջալովի և Նախիջևանի բնակիչների ցուցաբերած ջերմության մասին»[36]։ Ալեքսանդր 2-րդ կայսրը «շնորհակալություն է հայտնում Դոնի Նախիջևանի քաղաքի բնակիչներին իրենց հայրենանվեր և մարդասիրական զգացմունքի համար ու քաղաքը պարգևատրում «Ջանասիրության համար» ոսկե մեդալով և վլադիմիրյան ժապավենով»[37]։

Այսպիսով, Նոր Նախիջևանի գաղութը Ղրիմի պատերազմի ժամանակ յուր համեստ կարողությունների սահմաններում չխնայեց իր միջոցները և բազմակողմանի օգնություն ցույց տվեց ռուսական բանակին։ Թշնամու առաջխաղացումը կանխելու ձգտումով համակված հայ հասարակությունը դրամական միջոցներ ու պարենամթերք նվիրաբերեց, տրանսպորտի իր միջոցներով զորքի ու ռազմական հանդերձանքի տեղափոխությանը նպաստեց։ Նա վիրավորներին ու ռազմական գործողությունների հետևանքով անտուն ու անվաստակ մնացած քաղաքացիներին ընդունելու և ապաստարան հատկացնելու և Դոնի մատույցները ամրապնդելու աշխատանքներին անձամբ մասնակցելու միջոցով արտահայտեց հայրենասիրական իր վերաբերմունքը։

Հայկական գաղութի տնտեսությունը մեծապես հարմարվել էր պատերազմի պայմաններին ու նրա պահանջներին։ Կրճատվել էր առևտուրը, մանավանդ արտաքին։ Ծովափնյա ու գետափնյա քաղաքների թշնամու նավատորմի անընդհատ ռմբակոծումներից ահաբեկված Նախիջևանի շատ բնակիչներ թողել էին իրենց տները և տեղափոխվել հայկական գյուղերը։ Ինչ խոսք, նման պարագաներում, պատերազմի ավարտը մեծ խանդավառություն էր առաջացնելու բնակչության մեջ։ Նախիջևանցիներին հասկանալի նույն զոհունակությունն էր արտահայտում Միքայել Նալբանդյանը, երբ հաշտության օրերին իր հայրենակիցներին ուղղած նամակը ավարտում էր «շնորհավոր լինի խաղաղությունը»[38] արտահայտությամբ։

32 Նույն տեղում, գ. 81, թ. 2։
33 Նույն տեղում, գ. 1810, թ. 379։
34 ՀՍՍՀ Մատենադարան, Կաթ. դիվան, թ. 183, վ. 460։
35 ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 1830, թ. 379։
36 Նույն տեղում, գ. 1810, թ. 380։
37 Նույն տեղում։
38 Երվանդ Շահազիզ, Դիվան Միքայել Նալբանդյանի, Երևան, 1932, էջ 74։